ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՍՐԱՅԵԼԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԱԽՏԸ

Posted on June 2, 2010 by Keghart



Category: Opinions

Համօ Մոսկոֆյան, Բեյրութ, 2 Հունիս 2010

Էրդողանը՝ Երեքհարյուր Միլիոնանոց Արաբական Աշխարհի Հերոս
Անցած Կիրակի օր, իսրայելեան կործանիչները արդեն իսկ «փորձնական գրոհներ» էին կատարում Հարաւային Լիբանանի այն գյուղերի և աւանների վրայ, որտեղ Քրիստոսը բազմիցս այցելել ու հրաշքներ էր կատարել երկու հազար տարի առաջ...:

Համօ Մոսկոֆյան, Բեյրութ, 2 Հունիս 2010

Էրդողանը՝ Երեքհարյուր Միլիոնանոց Արաբական Աշխարհի Հերոս
Անցած Կիրակի օր, իսրայելեան կործանիչները արդեն իսկ «փորձնական գրոհներ» էին կատարում Հարաւային Լիբանանի այն գյուղերի և աւանների վրայ, որտեղ Քրիստոսը բազմիցս այցելել ու հրաշքներ էր կատարել երկու հազար տարի առաջ...:

Նախապատրաստվում էր այս բազմաչարչար երկրի դեմ նոր արկածախնդրություն, 2006 թ.-ի ամրան նման, իրենց ռազմա-քաղաքական «խիզախությունը» փորձարկելու ծայրահեղ աջ իսրայելեան կառավարության կողմից, որն գլխավորում է Նատանյահուն: Արդեն իսկ ատոմական զենքով Սիրիան ու Լիբանանը «քարե դարյան քաղաքակրթություն» վերադարձնելու սպառնալիքներ էին տեղացնում Արեվմուտքի և ԱՄՆի «շփացած» հոգեզավակ Թել Ավիվի ռազմատենչները, իբր թե «Հոզբալլա»ի «Սկադ» հրթիռների հավանական գործածությունը արգիլելու և այդ պատրվակով նոր սպանդներ կազմակերպելու, շուրջ 1 միլյոն հայ գաղթականներ ու Հայոց Ցեղասպանությունից վերապրած հայ ժողովրդի որդիներ ու դուստրեր պատսպարած արաբների դեմ:
Նոյն ժամերին, Իսրայելի կողմից Էվա Ռիվասին Eurovision-ի ելույթին 10 բալ նվերը՝ արդեն իսկ հարբեցրել էր մեր որոշ քաղաքական այրերին և քաղաքական մեկնաբաններին, որոնք առանց ամաչելու ամբողջ աշխարհով մեկ դիտվող արբանյակային հաղորդումներով՝ փառաբանում էին հայ-իսրայելեան «եղբայրական» հարաբերությունները, ԱՄՆ-ի ծագումով հրեա գոնկրեսմենների եւ սենատորների «նորահայտ» և «հաւերժ» սերը հայ ժողովրդի հանդեպ Ցեղասպանության ճանաչման գործընթացում. «հակա-թուրքական» նրանց հայտարարությունները առանց վերհիշելու թե ավելի քան մի քառասնամյակ Իսրայելն ու Թուրքիան, ռազմական ամենաջերմ դաշնակիցներ են եղել:
Ապա, պայթեց «Ազատության Նաւատորմ»ի սկանդալը, երբ մարդկային ու միջազգային ամեն իրավունք ոտնակոխած Իսրայելը, որի «պատմական» ղեկավարներ Արիել Շարոնի, Իցիակ Շամիրի, Մենահիմ Բեկինի, Կոլտա Մայերի, Ցիփի Լիվնիի, Բենիամին Նատանիահուի նման դահճապետների ուսերին է ծանրանում ավելի քան 1 միլյոն պաղեստինցի, արաբ ազգաբնակիչների զանգվածային սպանդը,

ձերբակալությունները, տեղահանությունը՝ 1947ից մինչև այսօր: Առավել ևս Գազայի խաղաղ ազգաբնակչությանը «պատժելու» համար, Իսրայելը ծովային ու ցամաքային բլոկադա է հայտարարել, քարուքանդ անելով անցած տարի հազարավոր բնակարաններ ու կենցաղային օպյեկտներ, սպաննելով կանանց ու երեխաներին, փորձելով սովամահ անել մի ամբողջ ժողովուրդ, այն էլ 21րդ դարի առաջին տասնամյակում, Արևմուտքի ու նրա դրածոների «մարդասիրական» հայացքների առաջ...:

Սպաննելով 16 ու վիրավորելով-հաշմելով մի քանի տասնյակ «Ազատության Նաւատորմ»ի անդամներին, ի վերջո, ամբողջ աշխարհով մեկ դատապարտման ու բողոքի ալիք բարձրացավ ինչպես արաբական երկրների, այնպես էլ մեծ տերությունների կողմից, որոնց կարգին՝ Ռուսաստանն էր: Դժբախտաբար Հայաստանը, ինչպես 2000 թվականի Լիբանանյան ողբերգության ժամանակ, նախընտրեց պահպանել իր «դրական չեզոքությունը», մոռանալով թե միայն վերջերս ՀՀ նախագահը հրավիրված էր Տեր-Զոր ու Սիրիա, ՀՀ Ազգային Ժողովի նախագահը՝ Պէյրութ, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր Պետրոսեանը 1992 թվին գրկաբաց ընդունվեց Հաֆեզ էլ-Ասադի կողմից՝ Դամասկոսում և իր ծննդավայր Հալեբում... և իսրայելյան դրոշը պարզեց Երևանի «Ազատության հրապարակ»ում՝ 2008 թվականում...:

Արդյոք ո՞ր մեկ Հայաստանի պետական ու քաղաքական գործիչը չեր վայելել արաբական երկրների հյուրընկալությունն եւ աղուհացը, սակայն ավելին՝ մի քանի օր առաջ «Շանթ» հեռուստատեսության «Հորիզոն» արբանյակային հաղորդմանը հետեւելով՝ քաղաքական մի պայծառափայլ մեկնաբան, ցինիկ ժպիտով, խորհուրդներ էր բաշխում նաեւ Մերձավոր Արևելքի հայերիս երևի, տառապել «իսրայելամոլութեան» ախտով, իսկ նույն ժամերին՝ Բեյրութում թե Սայդայում, Դամասկոսում, Կահիրէում, Ամմանում եւ այլուր, բյուրավոր ցուցարարներ Էրդողանի մեծադիր լուսանկարներով ու թուրքական դրոշներով «զինված», փառաբանում էին, դժբախտաբար 300 միլյոնանոց արաբական աշխարհի մեր օրերի հերոսին: Նրա հայտարարություններն ու քայլերը՝ Իսրայելի ոտնձգությունների դէմ, «Մատ» էին արել նաև Եգիպտոսի ու Հորդանանի վարչակարգերի դեմ, որոնք շտապեցին ի վերջո բանալ Ռաֆահի մարդասիրական անցքը՝ Գազայի ու Եգիպտոսի սահմանագծում:

Արդյո՞ք Հայաստանի վերոհիշյալ քաղաքական դեմքերին ու «ամենագետ» մեկնաբաններին ավելի էր հետաքրքրում Eurovision-ի հաղթանակները, և «Արմենիա» առագաստանավով շուրջաշխարհ «ման գալը», քան թե ի վերջո հասկանալ, թե՝ Մերձավոր Արեվելքում ռազմաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծվում, որն ղեկավարվելու է հայերի ոխերիմ թշնամի Թուրքիայի կողմից...:

Mr. Hamo Moskofian can be reached at hamomoskofian@yahoo.com